Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2022-2023 ուստարի)

10-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է գահակալել Արտավազդ 4-րդը. 0,5 մ.
   ա/ Ք. ա. 5-2 թթ. բ/ 18-34 թթ.
   գ/ 2-4 թթ. դ/ 4-6 թթ.
2. Ո՞վ է կառուցել Սամոսատ մայրաքաղաքը. 0,5 մ.
   ա/ Շամ բ/ Երվանդ 2-րդ
   գ/ Արշամ դ/ Երվանդ 4-րդ
3. Որտե՞ղ է գտնվում Ոսխա գյուղը. 0,5 մ.
   ա/ Բասեն գավառում բ/ Տիզբոնի մոտակայքում
   գ/ Բագրևանդ գավառում դ/ Եկեղյաց գավառում
4. Ո՞վ է «Մեծ մարդկանց մասին» աշխատության հեղինակը. 0,5 մ.
   ա/ Մեթրոդորոս Սկեփսացի բ/ Մովսես Խորենացի
   գ/ Բարդաձան դ/ Ամֆիկրատես Աթենացի
5. Ո՞ր թվականին է Արևելք ուղարկվել Պետոս զորավարը. 0,5 մ.
   ա/ 54 թ. բ/ Ք. ա. 66 թ.
   գ/ 61 թ. դ/ 59 թ.
6. Քանի՞ կիլոմետր երկարություն ունի Ճորոխ գետը. 0,5 մ.
   ա/ 500 բ/ 1113
   գ/ 345 դ/ 435
7. Ո՞ր թվականից են սկսվել Պորտաբլուրի պեղումները. 0,5 մ.
   ա/ 1916 թ. բ/ 1960 թ.
   գ/ 1995 թ. դ/ 2003 թ.
8. Ե՞րբ է Անտոնիոսը 60 հազարանոց զորքով արշավել Հայաստան. 0,5 մ.
   ա/ Ք. ա. 43 թ. ամռանը բ/ Ք. ա. 34 թ. ամռանը
   գ/ Ք. ա. 36 թ. գարնանը դ/ Ք. ա. 31 թ. աշնանը
9. Ե՞րբ է Տիգրան 2-րդի բանակը գրավել Պտղոմայիս քաղաքը: 0,5 մ.
10. Ո՞րերորդ դարում է տեղի ունեցել Տիմարքոսի հակասելևկյան ապստամբությունը: 0,5 մ.
11. Ո՞վ է «նեոլիթյան հեղափոխություն» եզրույթի հեղինակը: 0,5 մ.
12. Որքա՞ն էր Տիգրանակերտ մայրաքաղաքի բնակչությունը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Սարդուրի 2-րդի գահակալության ավարտը
    բ/ Մինչև Կասից ծով ընկած տարածքների նվաճումը Ռուսա 1-ինի կողմից
    գ/ Թեյշեբաինի քաղաքի կառուցումը
    դ/ Սարգոն 2-րդի արշավանքը Վանի թագավորություն
    ե/ Հերոդոտոսի աշխատության շարադրումը
    զ/ Ռուսա 1-ինի պարտությունը կիմերներից
    է/ Վանի տերության զորքերի առաջխաղացման կասեցումը Թիգլաթպալասար 3-րդի կողմից
    ը/ Շամիրամի ջրանցքի կառուցումը
    թ/ Երկու խոշոր ամրոցների վերակառուցումը Ռուսա 1-ինի կողմից

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Թիլ ավան	2. Անի ամրոց	3. Բագառիճ ավան
4. Երազամույն	5. Երիզա ավան	6. Աշտիշատ

ա. Անահիտ	բ. Արեգ-Միհր	գ. Նանե
դ. Վահագն	ե. Տիր	զ. Արամազդ

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Անտոնիոսի զորքը կենտրանացած էր Կարին գավառում, որտեղից էլ սկսվել է նրա արշավանքը:
բ/ Փոքրասիական դյուցազնավեպի հերոս Գիլգամեշը բռնում է «ճանապարհը դեպի Արատտա»:
գ/ Վրացիներն իրենց երկիրն անվանում են Սաքարթվելո, հայերը՝ Վիրք. Վրաստան, թուրքերը՝ Գյուրջեսթան:
դ/ Արատտայի արքայի եղբայրը երկրի գերագույն քուրմն էր:
ե/ Կուտիական աշխարհակալությունը ունեցել է տարածքային հսկայական ընդգրկում՝ Ամանոսի լեռներից ձգվելով մինչև Էլամ, Հայկական լեռնաշխարհի հյուսիսից մինչև Կարմիր ծով:
զ/ Միտանիի թագավորության մայրաքաղաքը Սուբարտուն էր:
է/ Տորք աստծո պաշտամունքը տարածված է եղել նաև միջինասիական մի շարք ժողովուրդների շրջանում:
ը/ Արմավիրը գտնվում է Արարատյան դաշտի արևմտյան մասում՝ Արաքսի աջ ափին:
թ/ Վանի թագավորության որմնանկարչությունը հիմնականում ներկայացված է Կարմիր բլուրի, Ոսկեբլուրի (Երզնկայի մոտ) և Էրեբունու նյութերով:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Մեհենագրային գրերը այլ կերպ կոչվում են դետերմինատիվային:
բ/ Մաղխազը արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարն էր:
գ/ Ասպետը արքունի կալվածքների հսկողությունն էր իրականացնում:
դ/ Գանձագին հողերը մասնավոր էին:
ե/ Պարգևականքը պայմանական հողատիրության ձև չէր:
զ/ Հորից որդի ժառանգվող հողերը կոչվում էին պապենական:
է/ Բդեշխները Մեծ Հայքի կենտրոնական նահանգների կառավարիչներն էին:
ը/ «Զորանամակ»-ով կարգավորվում էր նախարարների տեղը արքունիքում:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Տիրանի հետ բարդ հարաբերությունների հետևանքով մեծ կորուստներ կրեցին Ռշտունյաց ու Արծրունյաց տոհմերը:
բ/ Վռամշապուհի օրոք Կամսարականներին ու Ամատունիներին վերադարձվում են իրենց տոհմական տիրույթ-ները:
գ/ Արտաշատում տիրող կարգ ու կանոնին հետևում էին թագավորական տնտեսը՝ շահապը, և նրա պաշտոնյա-ները:
դ/ Վաղարշապատը Արտաշատին կապող պողոտան կոչվում էր Արտաշատի պողոտա:
ե/ Արտաշատ-Սատաղ մեծ և բարեկարգ ճանապարհի վրա էին Դվինը, Երվանդաշատը, Կարինը:
զ/ Արտաշատի վերջին տարիների պեղումների բացառիկ հայտնաբերումներից էին Արեգ-Միհրի տաճարը և խճանկարազարդ հասարակական բաղնիքը:
է/ Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոնը Արդինի քաղաքն էր, որն ասորեստանյան բնագրերում կոչվում էր Թեյշեբաինի:
ը/ Բարդածանը թարգմանություններ է կատարել ասորերեն և պահլավերեն լեզուներով:
թ/ Վանի թագավորության «Արևի ամիսը» համապատասխանել է օգոստոսին:

1	2	3

18. Գտե՛ք, դո՛ւրս բերեք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Սբ Գրիգորը, քարոզչության ու ավետարանության գործը տարածելով Հայաստանում, արևմուտքում հասցրել է Սատաղ քաղաքից մինչև Խաղտյաց երկիր՝ Կորդուքի մոտ:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Զորավարները որոշեցին, որ պետք է իջնել լեռների միջով դեպի կարդուխների երկիրը, քանզի ասել էին, թե նրանց երկրով անցնելուց հետո կհասնեն Արմենիա, որին իշխում էր Օրոնտեսը, և որը մեր էր ու հարուստ...»:

ա. Ո՞վ է նշված խոսքերի հեղինակը:
բ. Ո՞ր աշխատությունից է մեջբերված հատվածը:
գ. Ո՞ր աշխարհագրական տարածքն է ընդգրկում կարդուխների երկիրը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ օրոք է Եգիպտոսում Աթոնը դարձել գլխավոր աստված. 0,5 մ.
   ա/ Թութմոս 1-ին բ/ Յահմոս 1-ին
   գ/ Թութմոս 3-րդ դ/ Ամենհոտեպ 4-րդ
2. Ո՞վ է Աթենական պոլիսում ստեղծել ատենակալների դատարանը. 0,5 մ.
   ա/ Կլիսթենես բ/ Սոլոն
   գ/ Պերիկլես դ/ Պիսիստրատ
3. Ե՞րբ կառավարել Կառլոս Մեծը. 0,5 մ.
   ա/ 772-804 թթ. բ/ 919-936 թթ.
   գ/ 768-814 թթ. դ/ 486-511 թթ.
4. Ո՞վ է հաղթել Ակցիումի ծովամարտում. 0,5 մ.
   ա/ Օկտավիանոսը բ/ Պոմպեոսը
   գ/ Անտոնիոսը դ/ Հուլիոս Կեսարը
5. Ինչպե՞ս էր կոչվում Հին Հունաստանում քաղաքի հասարակական և առևտրական կենտրոնը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Կարլոս Մարտել	2. Անտիոքոս 3-րդ	3. Ալեքսանդր Մակեդոնացի	4. Փիլիպոս 2-րդ
ա. Պուատիե	բ. Քերոնեա	գ. Մագնեսիա	դ. Իսոս

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա/ 325 թ. Նիկեայի տիեզերական ժողովում ընդունվել է Հավատո հանգանակը կամ Հավատամքը:
   բ/ Հռոմեական աստվածներից շատերն ունեին էտրուսկյան ծագում՝ Յուպիտերը, Յունոնան, Սատուրնոսը, Պոսեյդոնը և այլն:
   գ/ Եգիպտական դիցարանում Իսիդայի և Օսիրիսի որդին Ամոնն էր:
   դ/ Ասորեստանի և Բաբելոնիայի վերելքի շրջանում զուգահեռ առաջ է մղվել Աշուր և Մարդուկ աստվածների պաշտամունքը:
   ե/ Չինական կրոնում Կոնֆուցիոսը անձրևի, կայծակի և քամու տիրակալն էր:
   զ/ Հունական դիցարանում Ապոլոնը արևի և գեղեցկության աստվածն էր:
   է/ Պլատոնը Սոկրատեսի ընդհանուր բանականության սկզբունքը վերափոխել է սուբյեկտիվ իդեալիզմի ուսմունքի:
   ը/ Ըստ Պյութագորասի՝ բոլոր իրերի կեցության սկզբունքը թիվն է:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ՝ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.02.2023 թ.